

Դպրոցականների հանրապետական օլիմպիադա
(2017-2018 ուստարի)

Հայ գրականություն

IX դասարան (տևողությունը՝ 180ր.)

Սիրելի՛ մասնակից, հաղթիր՛, և հաղթանակդ նվիրի՛ր գալիք տոնակատարության հերոսներին, որոնց անձնուրաց հավատի ու խիզախության արդյունքում ունենք մեր չքնաղ հայրենիքը, շենացնենք և արժանի լինենք նրանց հետնորդը կոչվելու պատվին:

Սիրով և հավատով՝ Ս. Աբազյան

1. «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկի պատմական հիմքը ովքե՞ր են հեղինակը և պատվիրատուն. ե՞րբ է գրվել մատյանը: Ե՞րբ է կրկնվել հայ ժողովրդի նույնանման այլ սխրանք, ինչպե՞ս է կոչվել այդ սխրանքը. գտի՛ր զուգահեռներ և նմանություններ: Նշի՛ր հերոսացած նահատակներին: 5մ.

2. Գրի՛ր Քերթոզահոր անցած ճանապարհի մասին(հալածանքներ, խարդավանքներ): Ո՞ւմ շնորհիվ է Քերթոզահայրը գնահատվել. ի՞նչ պատվեր է ստացել և ինչպե՞ս է իրականացվել այն: Գրի՛ր Քերթոզահոր ասույթներից (2-3) և մեկնաբանի՛ր: 5մ.

3. Ո՞վ է ներքոգրյալ ասույթի հեղինակը: Ո՞ւմ է ասվել և՛ երբ: Ո՞վ և ո՞ր մատյանում է խոսում այդ նշանավոր հերոսի մասին: Ի՞նչ նշանավոր ուղերձ է ուղղում հեղինակը՝ իր դեմ ուղղված մեղադրանքները հերքելու համար:
«...Տգետ ու փուչ մարդկանց ձեռքով հալածվեցին Հայոց աշխարհի լավ ու պիտանի մարդիկ.....Այդ մարդը գիրք չի կարդում, սակայն ընթերցվածն այնպես անսայթաք է ասում, ինչպես գրքի մեջ է գրված»:
5մ.

4. Գրի՛ր առակի մասին: Ո՞վ է հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը. ի՞նչ պատվանուններով են մեծարել նրան: Ովքե՞ր են հայ առակագրության հիմնադիրները: Մեկնաբանի՛ր Հովհաննես Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» առակը: Քո շրջապատում հանդիպե՞լ ես նման մարդկանց: 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

(Ս. Աբազյան)